ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՊԱՏՄԱԲԱՆԸ

(Պրոֆ. Համլետ Մալխասի Հարությունյանի ծննդյան 65-ամյակը)

Ծննդյան 65 տարին բոլորեց հանրապետության ճանաչված պատմաբաններից մեկը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանը: Նա ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 25-ին ՀԽՍՀ Սևանի շրջանի Լճաշեն գյուղում՝ ծառայողի ընտանիքում: 1954–1966 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, իսկ 1973 թ.՝ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:



Հ. Հարությունյանը 1969–1978 թթ. Սևանի շրջանի Գեղամավան և Լճաշեն գյուղերի միջնակարգ դպրոցներում աշխատել է որպես պատմության ուսուցիչ, ապա՝ ուսումնական մասի վարիչ: 1978 թ. հունիս-դեկտեմբերին որպես ավագ գիտաշխատող աշխատել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում: 1978 թ. դեկտեմբերին աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնում, իսկ 1979 թ. տեղափոխվել ինստիտուտի Նորագույն պատմության բաժին (այն ժամանակ կոչվում էր Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության բաժին), ուր աշխատում է մինչև օրս:

Հ. Հարությունյանը 1982 թ. պաշտպանել է «Հայկական ԽՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում. քանակը, կազմը, ստեղծագործական ակտիվությունը» խորագրով թեկնածուական ատենախոսություն, իսկ 1991 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «Հայաստանի բանվոր դասակարգը 1940–1950-ական թվականներին» թեմայով: 2005 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ. Հարությունյանը նաև փորձառու վարչական աշխատող է: 1994 թ. նա Գավառի պետական համալսարանի Պատմության ամբիոնի վարիչն է: 2003–2005 թթ. կատարել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության բաժնի վարիչի պարտականությունները, իսկ 2010 թ. հուլիսից ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի վարիչն է: Նա ՀՀ ԳԱԱ պատմության ինս-

տիտուտի և Գավառի պետական համալսարանի Գիտական խորհուրդների, ՀՀ ԲՈՀ-ի 004 «Հայոց պատմության» մասնագիտական խորհրդի անդամ է:

Լայն է Հ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա ուսումնասիրություններ է հրատարակել հին և միջին դարերի, նոր և նորագույն ժամանակաշրջանների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, նրա գիտական վաստակը մեծապես դրսևորվել է Հայաստանի XX դարի պատմության ուսումնասիրության բնագավառում՝ ՀԽՍՀ բանվոր դասակարգ, ժողովրդագրական գործընթացներ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Նոր Բայազետի գավառի պատմություն և այլն: Հեղինակ է հինգ մենագրության և տասնյակ հոդվածների:

Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի պատմությանը նվիրված նրա մենագրությունները [«Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը)» (1983, 158 էջ), «Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938–1960 թթ.)» (1987, 245 էջ)] խորհրդային ժամանակաշրջանով զբաղվող մասնագետների համար կարևոր ու օգտակար են նաև այսօր:

Արցախյան հարցի վերազարթոնքի և հատկապես Արցախյան պատերազմի շրջանում հայ պատմագիտության համար առանցքային խնդիր էր հիմնահարցի համակողմանի ուսումնասիրությունը և քարոզչական դաշտում ադրբեջանական կեղծիքների բացահայտումը: 1980-ական թվականների վերջերից հայ պատմաբանները բազմաթիվ ուսումնասիրություններ են հրատարակել Արցախի պատմության վերաբերյալ: Դրանց շարքում կարևոր տեղ ունի Հ. Հարությունյանի «Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ.» (1996, 299 էջ) մենագրությունը, ուր լուսաբանված է այդ ժամանակահատվածում Արցախում հայկական իշխանության մարմինների ձևավորումը, երկրամասի հայության համագումարները, թուրք և ադրբեջանցի նվաճողների դեմ համառ պայքարը, Անտանտի տերությունների ու Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը, Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու գործընթացը: Պատմաբանների կողմից այս աշխատությունը, իրավամբ, համարվում է Արցախյան թեմատիկայով հայրենական պատմագիտության առանցքային ուսումնասիրություններից մեկը:

Հայրենի տարածաշրջանի հանդեպ տածած անսահման սերն ու նվիրումը Հ. Հարությունյանին դրդեց ձեռնամուխ լինել Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի ամբողջական պատմության ուսումնասիրմանը: Արդեն հրատարակվել են հեղինակի «Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.» (2008, 294 էջ) և «Նոր Բայազետի գավառը

1914–1920 թթ.» (2012, 434 էջ) հիմնարար մենագրությունները, որտեղ աղբյուրագիտական հարուստ նյութի օգտագործմամբ ներկայացված է գավառի պատմությունը՝ սկսած Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրությանը միանալուց մինչև Հայաստանի Առաջին Հանրապետության կործանումը: Հ. Հարությունյանն անդրադառնում է գավառի վարչատարածքային փոփոխություններին, բնակչության տեղաշարժերին, ազգային և դավանական կազմին, սոցիալ-տնտեսական վիճակին, կրթամշակութային և հոգևոր կյանքին, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ փախստականների ու որբերի՝ գավառում տեղավորման, նրանց խնամքի կազմակերպման աշխատանքներին: Այս խնդիրները լուսաբանվում են Արևելյան Հայաստանի, հաճախ նաև Անդրկովկասի պատմության համապատկերի վրա: Այժմ Հ. Հարությունյանը հրատարակության է պատրաստում «Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ.» մենագրությունը, ուր լուսաբանվելու է գավառի՝ Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող շրջանի պատմությունը՝ մինչև գավառների փոխարեն շրջանների ստեղծումը:

Պրոֆ. Հ. Հարությունյանը ազնիվ քաղաքացի, սկզբունքային պատմաբան և բարեխիղճ գիտական ղեկավար է: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել շուրջ մեկ տասնյակ երիտասարդներ:

Շնորհավորելով մեր գործընկերոջը հոբելյանի առիթով՝ նրան ցանկանում ենք քաջառողջություն և ստեղծագործական բեղմնավոր գործունեություն:

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ,
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ